նգօք, եւ զառաջին պատարագն Փոխանորդ Եւդոկիացի Կարապետ Եպիսկոպոսն եւ սահմանեցաւ այնուհետեւ 'ի հինգշաբթի և 'ի կիւրակէ աւուրս անխափան պատարագել 'ի ներքոյ գմբեթին 'ի վերայ այնր սեղանոյ ('ի 17 Յուլիսի · 1836)։ Մինչեւ ցայս վայր զօրութեամբ առաջին հրովարտակին։ Եւ 'ի ժամանել երկրորդին եւ յընթեռնուլ 'ի դատարանի ըստ առաջնոյն, քակեցին զարտաքին դուռն դաւթի, և չինեալ բարձրացուցին, եդեալ 'ի նմա դուռնս երկաթապատ, և 'ի վերայ բարաւորի նորին հայեցի վերատաւութիւն · և 'ի դրանէ աստի մինչեւ 'ի դուռն գմբեթին՝ ձեղուն տախտակամած 'ի պատսպարումն ժողովրդոց յարեւէ և յանձրեւէ 'ի ժամ պաշտամանն · եւ 'ի ներքս 'ի դաւթի անդ չինեցին մի սենեակ կրկնայարկ 'ի պէտս Լուսարարի և կարասեաց, և քարեայ սանդուխտ վերելից երկաթի յենարանաւ։ Իսկ արտաքոյ պարսպի եկեղեցւոյն կառուցին սենեակ մեծ 'ի պէտս անասնոց, զորոյ տեղին յառաջագոյն գնեալ էր Եփրեմ վարդապետ 'ի գիւղականաց, և բացին դրունս երկուս, մին 'ի դաւթի եկեղեցւոյն և միւսն 'ի փողոցի · և 'ի վերայ նորա սենեակս երկուս, որոց պատուհանքն հայէին յարեւմուտս դէպ 'ի քաղաքն Երուսաղէմ, և զայլ կարեւոր տեղիս ըստ պատշաճին, և 'ի վերայ իւրաքանչիւր չինուածոյ լինէր քննութիւն 'ի դատարանէ տուեալ Հէօճէմէթս։

Զեւ եւս աւարտեալ այսոցիկ չինուածոց՝ առաքեցին Հայք զառաջին և զերկրորդ Հէօճէմէթս չինութեան 'ի Կոստանդինուպոլիս՝ ստիպեալ յընդդիմութենէ Լատինաց, առնուլ 'ի Դրանէ եւ զերրորդ հրովարտակ։ Այլ 'ի մատուցանել զայնս 'ի Դուռն գիտութեամբ զվաւուրաց ազգին և ազերսագրով Ստեփաննոս Պատրիարքի, դարձաւ յետս, զի յերկուս տեղիս՝ հաւասար Արքայի պատուանունս տուեալ էին Փոխարքային Եգիպտոսի, որոյ վասն չհամարձակէին մատուցանել զայն առ Արքայ, որ սովոր էր զայնպիսի գրեանս ինքնին ընթեռնուլ, այլ փոխանակ նոցին խնդրէին Իլամ 'ի նոյն Դատաւորէ ըստ մտաց Հէօճէմէթն երկրորդի։

Իշխանաւորք ազգին առեալ էին յառաջագոյն հրովարտակ յԱրքայէ \۲۵۱\ թուին վասն նորոգութեան եկեղեց-